ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության

և

Բրիտանական խորհրդի

միջև

Բրիտանական խորհրդի անգլերենի և կրթության ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ ի դեմս նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի, և Բրիտանական խորհուրդը՝ հայաստանյան մասնաճյուղի միջոցով (այսուհետ՝ Բրիտանական խոսրհուրդ)՝ ի դեմս տնօրեն Արևիկ Սարիբեկյանի (այսուհետ՝ Կողմ և/կամ Կողմեր).

Նպատակ ունենալով համագործակցել Բրիտանական խորհրդի անգլերենի և կրթության ծրագրի իրականացման շրջանակներում

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Համագործակցության նպատակն է համակարգել Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող անգլերենի և կրթական ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները, որոնք նպատակ ունեն նպաստել Հայաստանի կրթության բարեփոխումներին՝ խթանելով դասավանդման և ուսումնառության որակի բարձրացումը:

Համագործակցության ակնկալվող արդյունքներն են.

1. **Հայաստանում «Պետական դպրոցների շարունակական մասնագիտական կողմնորոշման քաղաքականության և շրջանակի» մշակում»:**

Բրիտանական խորհուրդը՝

ա) ֆինանսական աջակցություն կտրամադրի Մեծ Բրիտանիայի խորհրդատվության համար՝ շրջանակը մշակելու գործընթացում.

բ) կապ կհաստատի Նախարարության հետ, կկառավարի և կհամակարգի աշխատանքները տեղում և կապահովի վերջնարդյունքի լիարժեք համապատասխանեցումը Նախարարության տեսլականի և գերակայությունների հետ.

գ) քաղաքականության փաստաթղթի և շրջանակի տարածման նպատակով կստանձնի Երկխոսության քաղաքականության ֆորումի կազմակերպումը հիմնական շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Նախարարությունը՝

ա) Նախարարության անձնակազմից համապատասխան աշխատակիցներ կպատվիրակի՝ աջակցելու ծրագրի շրջանակներում փաստաթղթային ուսումնասիրություններ իրականացնելու գործընթացում՝ կրթության ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ հընթացս տեղեկատվություն տրամադրելով.

բ) կձևավորի և կհամակարգի Տեղական խորհրդատվական խումբ՝ մշակված քաղաքական փաստաթղթի և շրջանակի վերանայման և հետադարձ կապի ապահովման համար.

գ) կնպաստի շահառուների շրջանում ծրագիրի տարածումը:

2. **«Ապագա անգլերեն. Ճանապարհներ դեպի գերազանցություն» ծրագրի միջոցով անգլերենի ուսուցման համակարգում իրականացնել հետազոտություն և խորքային ուսումնասիրություն ու խթանել նորարարությունները:**

Բրիտանական խորհուրդը՝

ա) ֆինանսական աջակցություն կցուցաբերի 16 տարեկան երեխաների անգլերենի հմտությունները (նրանց շարժառիթները, նպատակները և ուսման նախասիրությունները), անգլերենի ուսուցիչների լսարանային պրակտիկան և վերաբերմունքը վերլուծելու, ինչպես նաև հասկանալու

համար, թե երկրի լեզվական քաղաքականությունը որքանով է ազդում վերոգրյալի վրա.

բ) կստանձնի Երկխոսության քաղաքականության ֆորումի կազմակերպումը՝ հետազոտության արդյունքները համօգտագործելու և հնարավոր լուծումներն ուսումնասիրելու համար՝ կենտրոնանալով անգլերեն լեզվի քաղաքականության և ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման վրա.

գ) կստանձնի «Ուսուցիչների վիրտուալ աշխատանքային խմբեր (vTAG)» անվանմամբ վիրտուալ ուսուցման համայնք ստեղծելու հանձնառությունը՝ որպես թվային նորարարություն՝ աջակցելու անգլերենի ուսուցիչներին համախոհ մասնագետների հետ կապվելու, ռեսուրսների հասանելիություն ունենալու և անհատականացված առցանց ուսուցման փորձ ունենալու ուղղություններով:

Նախարարությունը՝

ա) Նախարարության անձնակազմից համապատասխան աշխատակիցներ կպատվիրակի տվյալների հավաքագրման և պետական դպրոցներ այցելությունների գործընթացում աջակցություն ցուցաբերելու համար.

բ) կապ կհաստատի դպրոցների մակարդակում ծրագրի շահառուների և շահագրգիռ կողմերի հետ և կմասնակցի հետազոտական աշխատանքների համակարգմանը.

գ) կնպաստի տարածմանը ծրագիրը շահառուների շրջանում:

3. «Անգլերենի ազդեցությունը» հետազոտական ուսումնասիրության նախագիծ

Բրիտանական խորհուրդը՝

ա) ֆինանսական աջակցություն կցուցաբերի Ավստրալիայի կրթության հետազոտությունների խորհրդի (ACER) կողմից PISA մեթոդաբանության հիման վրա հետազոտություն իրականացնելու համար.

բ) կաջակցի Ավստրալիայի կրթության հետազոտությունների խորհրդին՝ Հայաստանում անգլերենի ունակությունների բազմաբնույթ պրոֆիլ

ստեղծելու և ուսումնառության համակարգերի զարգացման վրա քաղաքականության որոշումների ազդեցությունը ախտորոշելու ուղղությամբ՝ ուսումնական պլան, դրա կիրարկում ու գնահատում:

Նախարարությունը՝

ա) Նախարարության անձնակազմից համապատասխան աշխատակիցներ կպատվիրակի՝ նմուշառման սահմանված չափանիշների և պահանջների համապատասխան Բրիտանական Խորհրդին աջակցություն ցուցաբերելու համար.

բ) կապ կհաստատի հանրապետության 150 թիրախային դպրոցների հետ՝ հետազոտության գնահատման և արդյունքների տեղայնացման գործընթացներին աջակցելու համար:

4. «Կոդավորման հմտություններ. Կապակցենք ներկան ապագային» նախագիծ

Բրիտանական խորհուրդը՝

ա) VEON Armenia-ի (Beeline Armenia) ֆինանսական օժանդակության միջոցով կփորձարկի մի ծրագիր, որի նպատակն է կոդավորման հմտություններ դասավանդել երեք ավագ դպրոցների աշակերտներին և զարգացնել քննադատական մտածողության, որոշումների կայացման, խնդիրների լուծման, ստեղծագործականության և համագործակցության հիմնարար հմտությունները.

բ) մանկավարժական, տեխնիկական, նյութատեխնիկական աջակցություն կտրամադրի ծրագրի փորձարկման մեջ ներգրավված դպրոցներին.

գ) կիրականացնի ծրագրի արդյունքների մոնիտորինգ և գնահատում:

Նախարարությունը՝

ա) Նախարարության անձնակազմից համապատասխան աշխատակիցներ կպատվիրակի՝ աջակցելու Բրիտանական խորհրդին պիլոտային ավագ դպրոցների ընտրության հարցում.

բ) կաջակցի նախագծի դիրքավորմանն ընտրված ավագ դպրոցների շրջանում.

գ) աջակցություն կցուցաբերի կայունության ապահովման և ծրագրի հետպիլոտային փուլի ընդլայնման ուղղություններով:

ՀՈԴՎԱԾ 2. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1) Կողմերը գիտակցում են, որ նրանցից ոչ մեկը սույն հուշագրի շրջանակներում այլ Կողմի մտավոր սեփականության նկատմամբ իրավունքներ չունի:
2) Այն պայմանները, որոնցով Կողմերից յուրաքանչյուրն իրավունք կստանա օգտվել մյուս Կողմի մտավոր սեփականության իրավունքից, անհրաժեշտության դեպքում կսահմանվեն իրավաբանական ուժ ունեցող առանձին համաձայնագրով:
3) Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է հավաստիանալ, որ սույն հուշագրի նպատակի հետ կապված ցանկացած հրապարակում հավաստի է և ոչ երկիմաստ ու չի պարունակում մյուս Կողմին վերաբերող տեղեկատվություն՝ առանց վերջինիս նախնական գրավոր համաձայնության (ներառյալ ապրանքանիշ և լոգո):

ՀՈԴՎԱԾ 3. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1) Կողմերը գիտակցում են երեխաների պաշտպանության և ռիսկային գոտում գտնվող մեծահասակների գերակա կարևորությունը սույն փոխըմբռնման հուշագրի նպատակին հասնելու գործընթացում և հավաստում են, որ սույն փոխըմբռնման հուշագիրը ստորագրող յուրաքանչյուր պետություն ունի կայուն քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք համահունչ են երեխաների պաշտպանության և ռիսկային գոտում գտնվող մեծահասակների հետ առնչություն ունեցող գործող բոլոր օրենսդրություններին՝ ներառյալ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (UNCRC) 1989 թ.: Ռիսկային գոտում գտնվող մեծահասակների և (կամ) երեխաների պաշտպանության հետ կապված ցանկացած հնարավոր միջադեպ կարող է հանգեցնել սույն հուշագրի անհապաղ դադարեցմանը:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Հուշագիրն արտացոլում է Կողմերի մտադրությունները և նրանց համար չի առաջացնում իրավական պարտավորություններ:

Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով: Ժամկետի ավարտին Կողմերը կարող են վերանայել սույն Հուշագիրը և համագործակցությունը շարունակելու որոշում կայացնել:

Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և կազմում են դրա անբաժանելի մասը:

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման մասով ծագող բոլոր տարաձայնությունները և վեճերը կկարգավորվեն Կողմերի միջև բանակցությունների և (կամ) խորհրդատվությունների միջոցով:

Սույն Հուշագրի գործողության ժամկետը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ առնվազն 6 ամիս առաջ մյուս Կողմին դադարեցնելու մտադրության մասին գրավոր տեղեկացնելու դեպքում:

Կատարված է Երևան քաղաքում 2021թ.-ի 23 փետրվարի. երկու հավասարազոր բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և անգլերեն: Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ	Բրիտանական Խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
Արթուր Մարտիրոսյան	Արևիկ Սարիբեկյան